ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Երևան « 08 » փետրվարի 2019թ.
Ժամը՝ **11 ⁰⁰**

Մասնակցում էին՝

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	Ռ. Շահազիզյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	Մ. Թովմասյան, Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	Գ. Միրզոյան, Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	Հ. Վարդանյան

Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

- Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ,
- Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ
- Հանձնաժողովի ընդունած որոշումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և ստացված տեղեկատվության վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարի կողմից 2019 թվականի փետրվարի 1-ին, կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Պետական եկամուտների կոմիտեից սույն թվականի փետրվարի 6-ին տրամադրվել է տեղեկատվություն:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ տեղեկություններ

Ընդունել ի գիտություն:

Հանձնաժողովի քարտուղարը սույն թվականի փետրվարի 1-ին, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, ծանուցել է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով հրավերով սահմանված կարգով և ժամկետում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը սույն թվականի փետրվարի 6-ին ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

3. Հանձնաժողովի ընդունած որոշումները

Հանձնաժողովը որոշեց.

3.1. Իրականացված գնահատումների հիման վրա «ՀՀ-ԲԾ-ԳՀԾՁԲ-19/02» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել Ֆ/Ա Տիգրան Սուքիասյանին,

3.2. Հանձնաժողովի քարտուղարին.
Պայմանագրի կնքման նպատակով Ֆ/Ա Տիգրան Սուքիասյանին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ, պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջ՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների և քարտուղարի հավաստումը ընդունված որոշումներին

Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)	_____	Ռ. Շահազիզյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	_____	Մ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Գնահատման աշխատակազմ (ԳՊ/ԳԱ)	_____	Վ. Թովմասյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	_____	Գ. Միրզոյան
Գնման Պատասխանատու /Բացման աշխատակազմ (ԳՊ/ԲԱ)	_____	Կ. Բզնունի
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ)	_____	Հ. Վարդանյան